

ԿՐՕՆԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

ԳԼ. Է46 - Ը51

46.- Անուշահոտ իւղով գլուխս չօծեցիր, սա անուշահոտ իւղով օծեց զիս: Ու ամենաբարի բնութիւն, ի՞նչպիսի նուէր ստացաւ, ոչ թէ նուէրին կարեւորութիւն կուտայ, այլ մատուցողին մտադրութեան: Ըստ որում նոյի մատուցած զոհին առնջութեամբ գրուած է, - Տէրը անուշահոտ առաւ: Ծննդոց. գլուխ 8:

47.- Այս պատճառաւ կ'ըսեմ - թողեալ ըլլան իր բազում մեղքերը, վասնզի շատ սիրեց: Նախ կ'նշ խոր հաւատքը ցոյց տուաւ, ապա կ'արդարացնէ, շատ սիրեց ու վաստակեցաւ, իր անձը վարձքի հատուցման արժանացուց: Իր անձը յայտնեց մարգարէին խօսքով թէ անօրէնութիւնը կը վերցնէ և ծով կը թափէ:

47.- Որովհետեւ անոր որ շատ թողութիւն կուտայ, շատ կը սիրէ, որուն սակաւ, սակաւ: Հաւաստի գիտութեամբ, արդարադատ իրաւամբ, գիտէ ամէնքը չափել: Ինչպէս աշխատանքին համաձայն վարձք, նոյնպէս և ըստ հաւատքի և սիրոյ, թողութեան շնորհ. որովհետեւ առատ է պարգեւօք, ողորմած է թողութիւն տալու:

48.- Յետոյ կ'նշ դառնալով կ'ըսէ - թողեալ ըլլան մեղքերդ: Դատելով արդարացուց ապա իշխանաբար քաւութիւն շնորհեց: Մարգարէներու միջոցաւ օրէնք հաստատած էր այն մասին թէ, անօրէնը երբ ետ դառնայ չար ճանապարհէն, անոր մեղքերը և անօրէնութիւնները, չյիշուին: Եթէ Հին կտակարանին մէջ որ ստուերական ձեւով գալիքը կը պատմէ, այսպէս օրէնք դրուեցաւ, ի՞նչ ըսենք հապա շնորհի ազատութեան մասին որով իր անձը իրրե ճշմարտութիւն ցոյց տուաւ:

49.- Իր հետ այլ սեղանակիցներ սկսան մտովի ըսել - ո՞վ է այս որ մեղքերու թողութիւն կուտայ: Այսպէս խիտահար եղան անդամալոյծի բժշկութեան ատեն: Այն ատեն իրենց ծածուկ մտածումները յանդիմանեց բժշկելով անդամալոյծը, մեղքերու թողութիւն շնորհելու իշխանութեամբ: Այստեղ չյայտնեց անոնց ծածուկ մտածումները, անգամ մը յայտնութեամբ խօսեցաւ Սիմոնի կարծիքներուն մասին, դարձեալ նոյնը կրկնել աւելորդ սեպեց: Կ'նշ նայելով ըսաւ.

50.- Հաւատքդ ապրեցուց քեզ, գնա խաղաղութեամբ: Ամէնքին ուսուցանեց այնպիսի հաւատք ընծայել և այսպէս թողութեան շնորհի արժանանալ: Խաղաղութեամբ գնա ըսելով կը հասկցնէ թէ խռովարարը վերցած է մէջտեղէն: Ինչպէս որ մարմնական ցաւերը մարմինին հետ կը պատերազմին կը նեղեն ու կը տագնապեցնեն մարմինը, նոյնպէս և մեղքերը սաստկապէս կը պատերազմին հոգիներուն հետ սպաննելու համար զանոնք: Ոչ միայն այսչափ այլ, կը հակառակին Աստուծոյ և կ'օտարանան և սատանային հաղորդ ըլլան: Ահա իր գործով կ'ինը այսպիսի բաներէ ազատեց ինքզինք որուն համար կ'ըսէ - գնա՛, հանգչիր խաղաղութեամբ:

Գլխավոր

Անկէ ետք, քաղաքներուն և գիւղերուն մէջ կը շրջէր ու կը քարոզէր, կ'աւետարանէր արքայութեան մասին: Իր Հետ էին տասներկուքը և կիներ որոնք բժշկուած էին չար դեւերէ: Կնոջմէ իւղով օծուիլը Հարկաւ նշանն է իր թաղման: Որովհետև իր բնութիւնը ամենախնամ էր, Հետևաբար այս պատճառաւ ալ եկաւ որպէսզի ամէնքը իր մօտ ժողովէ: Ոչ ոք կ'անտեսնէ, քանզի ոչ մէկէն կը զարշի: Իր իսկ ստեղծածները ի՞նչպէս կրնայ արհամարհել: Հապա մեծաւ խնամակալութեամբ կը ժողովէ իր մօտ մարդիկ և կիներ: Կը սրբէ զանոնք Հոգեւոր և մարմնաւոր ախտերէ: Անոնք ալ իր Հետ կը շրջին և կ'սպասաւորեն: Զանոնք ի բաց չի վաներ: Նշանաւոր կիներ էին անոնք:

2.- Մարիամ Մաղթաղենացին որմէ եօթը դեւերը ելած էին: Յովհաննա, Հերովդի Քուղա Հազարապետին կինը և Շուշան: Այս երեւիլի կիները, իրենց ինչքերէն կը ծախսէին կամ կ'սպասաւորէին անոր: Աղքատութեան Համար չի յարեցան անոր, այլ Հաւատքի և անոր կատարած Հրաշքներուն և քարոզութեան Համար, ինչպէս նաև ստացուած երախտիքներուն Համար, զի ազատեց զանոնք այն դեւերէն որոնցմէ կը չարաբուէին: Այս շնորհը ընդունած ըլլալով, անկէ բաժնուիլ չէին ուզեր բնաւ:

4.- Երբոր կը շրջէր և կ'ուսուցանէր, մարդոց բազմութիւն Հաւաքուեցաւ, Գալիլիացւոց ծովուն եզերքը: Սկսաւ անոնց առակաւ խօսիլ, որովհետև նաեւ այս գրուած էր իր մասին մարգարէներու կողմէ " բացից առակաւ զբերան իմ, խօսեցայց զիմաստութիւն զծածկեալն ի սկզբանէ:"

5.- Սերմնացանը ելաւ իր սերմերը ցանելու: Իր անձը կենաց խօսքի սերմնացան կը կարգէ, բանաւոր Հոգիներու և միտքն ալ կը նմանցնէ երկրի ուր սերմերը պիտի ցանուին: Տեղ տեղ ժայռուտ են բազմապատիկ մեղքերու առատութենէն, ուրեմն խորհուրդին իմաստը վատնուեցաւ: Թէև խօսքին սերմցունքը ստացան, սակայն սերմանողին Համար առաքինութեան պտուղ չկրցան Հատուցանել, որովհետև չկրցան սատանայական փորձութիւններու տապին Համբերել, ուստի տարածած խորշակահար, փնացան: Ոմանք իրենց անձերը ճանապարհ դարձուցին ախտերու և սմբակներու ոտքի կոխան, պնդանալով կարծրացան ամբարշտութեամբ ախտացեալ, չկարողացան խօսքին սերմը բուսցնել: Անոնց վրայ փորձութեան թռչունները զալով կրցահարեցին և քարոզութեան սերմերը տարին, ուստի սերմանողին Համար անպիտան եղան: Իսկ ուրիշներ տակաւին, աշխարհական ցանկութիւններու փուշերուն մէջ ինկան, որովհետև նոյն ատեն կարելի չէ նեղ և ընդարձակ ճանապարհէն ընթանալ, մեղքերու տատասկներն ու սերմերու առաքինութիւնը նոյն և մէկ Հոգիի մէջ սնուցանել, այս պատճառաւ, փուշերուն մէջ խեղդուեցան և առաքինութեան պտուղէն պակասեալ եղան:

Ուրիշներ իրենց անձերը պաշնելով ոտքի կոխան ճանապարհ կամ ապառաժուտ տեղ չեղան ոչ ալ փուշերու ընդունակ եղան: Այլ իրեւ բարեբեր գետին, քարոզութեան սերմը ընդունեցին, հողիններու բարի մշակէն և բարի արդիւնքներ տուողին սերմերը անցուցին: Սակայն բոլորը նոյն չափով չզարգացան, այլ զանազան չափով կ'անցնեն բարութեան պտուղը, այդ չափով ալ Աստուծոյ տուած պարգևները կը սահմանուին:

16.- Ոչ ոք ճրագը վառելով կարասիին ներքև կը թաքցնէ կամ մահիճին տակ կը դնէ, այլ աշտանակի վրայ:

Միայն աշակերտներուն կ'ուսուցանէ առակին իմաստը, կը յայտնէ անոնց թէ այս գիտութեամբ իրեւ ջահ կը պատրաստէ գիրենք, այն առատ լոյսէն որը ինք ունէր բնութեամբ: Ուրեմն այդ լոյսը չեն կրնար թաքցնել, այլ ասկէ ետք պարտին լոյսը սփռել ամէն տեղ:

18.- Ուշագիր եղէք Ձեր լսածներուն. այն որ ունի, աւելի պիտի տրուի, այն որ չունի, ինչ որ կը խորհի թէ ունի, պիտի առնուի իրմէ:

Առ այս՝ կ'զգուշացնէ անոնց որոնք կը զլանան պտղաբեր ըլլալու, ըսելով - ով որ բարի գործերով առատ է, անոնց առաւել ևս պիտի տրուին քարոզութեան սերմերը: Իսկ ան որ չկամեցաւ բարութեան պտուղ տալ, լսելը անգամ պիտի վերցուի անկէ: Ըստ այնմ, ամէն ճիւղ որ պտուղներով լեցուն է, կը խնամարկէ, իսկ այն որ անպտղաբեր է, կը կտրէ զայն:

19.- Այն ատեն իր մայրը և անոնք որոնք եղբայրները անուանուած էին, գալով, փառասիրութեամբ, զինք կը կանչեն: Յիսուս ուղեւորով մարել անոնց մտքերու ամբարտաւանութիւնը, ըսաւ.- եղբայրներս անոնք են որոնք հօրս կամքը կը կատարեն որ յերկինս է:

22.- Օր մը նաւ նստաւ աշակերտներուն հետ, ըսաւ - եկէք ծովակին միւս ափը անցնինք:

Նաւ նստաւ աշակերտներուն դաստիարակելու համար որպէսզի իր զօրութիւնը չմոռնան: Կը հրամայէ որ ծովը ալեկոծի, ինքն ալ կը քնանայ: Աշակերտները զարհուրած, մօտեցան, արթնցուցին զինքը որպէսզի օգնէ իրենց: Արթննալով զաղբեցուց յուզուած ալիքները: Մարգարէներու ժամանակը կը յիշեցնէ. երբ խաղաղ է Աստուած, աշխարհի ծովուն մէջ կը բարձրանան սատանայական մըրկեալ ալիքները: Կամ բարձրանան լեռնանան, իջանեն, դաշտանան: Մարգարէները կ'աղօթէին Աստուծոյ, "արթնցիր Տէր', ինչո՞ւ կը քնանաս": Եւ - "արի Տէր, օգնէ մեզ և փրկէ մեզ: " Ուրեմն այս ծովակին վրայ առաքեալներուն առջև ցոյց տուաւ խորհուրդը որով պիտի հանդարտեցնէր սատանայական խռովեալ ալիքները, որպէսզի անոնք ալ հեթանոսներուն առջև միջամուխ ըլլային. անոնք տեսան և հասկցան իր զօրութեան աստիճանը առ այն թէ Աստուծոյ որդին է:

26.- Նաեւելով եկան Գերգեսացուց երկիրը որ Գալիլիոյ լճին դիմացն է. ցամաք ելան և Հանդիպեցան մէկու մը որուն ներսիդին դեւեր կային:

Չար և ստամբակ ծառաները կը լռեցնէ, դադրեցնելով անոնց չարագործութիւնը. անոնք աւազակի նման բռնած իրենց ծառայակիցները կը չարչարէին: Կ'աղաչէին իրեն որ վրէժխնդիր չըլլայ իրենց նկատմամբ:

31.- Դեւերը կ'աղաչէին որպէսզի զիրենք անդունդին մէջ չզրկէ:

Անարգ ու տղմասէր դեւերը կը խնդրեն խողերուն մէջ մտնել, այդպէս ալ կ'արտօնէ: Ասկայն խողերուն Հետ, ծովուն խորքը կը պահէ զանոնք, որովհետեւ կը խորհէին խողերուն Հետ անոնց տունները վերադառնալ: Գերգեսացիները տեսնելով այս, վախցան, գուցէ նոյնը պատահի ամէնքին ալ, յայտնի էր անոնց թէ իրենք արժանի չէին որ անոր մեծութիւնը բնակէր իրենց մօտ: Կ'աղաչէին որ իրենց մօտէն մեկնի: Իսկ բժշկուածը վախցաւ Հոն մնալու, այլ կամեցաւ իր Հետ երթալ: Իսկ Յիսուս ըսաւ անոր Հոն մնալ և իր զօրութեան մասին քարոզել: Իսկ ինք նաւ մտնելով այնտեղէն ետ դարձաւ: Ժողովուրդը որ նախանձով ու չարութեամբ չէր լեցուած իր դէմ, կ'ակնկալէր զինք:

41.- Ժողովուրդի իշխաններէն մարդ մը որ Յայրոս կը կոչուէր, Յիսուսի ոտքերուն իյնալով կ'աղաչէր իր տունը մտնել որովհետեւ տասերկու տարեկան միամօր դուստրը մահամերձ էր: Այսպէս եղաւ որպէսզի ժպիրհները որոնք կը լրբանային, ամօթապարտ մնան: Թէև ժողովրդապետը կատարեալ Հաւատք ցոյց չտուաւ, սակայն Յիսուս անոր աղաչանքները չանտեսեց, այլ գնաց խնդրողին մտադրութիւնը կատարելու: Երթալու ատեն, այն որ կատարեալ Հաւատք ունէր, ամօթալի ախտին Համար չէր Համարձակէր անոր առջև կենալ, Հնարք մը գտաւ, ծածկապէս բժշկութեան պարգևը գողնալու. մօտենալով անոր Հագուստի քղանցքին, շնորհընկալ եղաւ: Որպէսզի Հոգևով չի վնասուի առողջացողը, կարծելով թէ Յիսուս անդիտացաւ գաղտնօրէն կատարուածին, մանաւանդ որ ժողովուրդն ալ իր շուրջը կը նեղէին զինք, Հարցուց Յիսուս թէ ով մօտեցաւ իրեն Հաւատքով:

46.- Յիսուս ըսաւ – մէկը մօտեցաւ ինծի, որովհետեւ զօրութիւն ելաւ ինձմէ: Կինը դողալով եկաւ, ինկաւ իր առջև. ամէնքին սորվեցուց Հաւատքով մօտենալ իրեն: Տէրը գովեց անոր Հաւատքին քաջութիւնը: “ Հաւատքդ, ըսաւ ան, բժշկեց քեզ: ”

Եկան ժողովրդապետին ըսելու թէ դուստրդ մեռաւ: Յիսուս ըսաւ, մի վախնար, այլ միայն Հաւատայ. որպէսզի Հաւատք ունենալ սորվի և ընծայէ արժանին անոր:

51.- Տուն մտնելով, չարտօնեց որ մէկը մտնէ, բացի Պետրոսէ, Յովհաննեսէ և Յակոբոսէ, ինչպէս նաև մանուկին Հայրն ու մայրը:

Երբ շատերը ըսին թէ մեռաւ, ինք պատասխանեց թէ, չէ մեռած այլ կը ննջէ: Իր զօրութիւնը այսպէսով երկպատիկ կը քարոզուի: Թէ յարութենէն ետք կը խոստովանին մեռած ըլլալը. կը խոստովանին այն որ յարութիւն առնել տուաւ մեռեալին: Եթէ ուրանան, անհաւատութեան պատճառաւ, ամենատես բնութեան մասին վկայած կըլլան: Որովհետև մեռեալին մօտը ըլլալով, գիտցան թէ մեռաւ, իսկ Յիսուս Հեռուն ըլլալով գիտէր թէ չէ մեռած այլ կը ննջէ: Այսպէսով Հրամանաւ և իմաստիւք կը յարուցանէ մեռեալը որպէսզի ամէնքը յարութեան մասին հաւատք ունենան:

(Շարունակելի)

ԶԱԽԷՆ ԱՐԲ. ԶԻՆԶԻՆԻԱՆ

ՀԵԹՈՒՄ Ա

Թագավորն է Կիլիկյան Հայաստանում 1226–1270 թ.թ.

Կիլիկյան Հայաստանի Հերոմ Առաջին թագավորը Կոստանդինոպոլիսի որդին է: 1226 թվականին ամուսնացել է Լեոն Մեծագործի դուստր Զաբելի հետ: Եւ հռչակվել հայոց թագավոր: Հերոմ Առաջինի գահակալումով հիմնադրվել է Հերոմյան գահադինի: Մինչև Հերոմի ու Զաբելի չափահաս դառնալը արքայությունը ղեկավարել է Հերոմի հայր Կոստանդինը: Հերոմ Առաջինի ժամանակ Կիլիկյան Հայաստանը արևմտական ու մշակութային մեծ վերելք է ապրել: 1254 թվականին մեկնել է Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորում եւ բարեկամական դաշինք կապել Մոնղոլիայի կայսրության հետ: Այդ դաշինքի շնորհիվ Կիլիկյան Հայաստանը ոչ միայն զերծ է մնացել մոնղոլական ասպարակություններից, այլև մոնղոլների զինակցությամբ անկախություն է իր միջազգային դիրքը:

◆ ◆ ◆

Հերոմ Առաջինը իմաստասեր էր և վարել Կիլիկյան Հայաստանի թագավորությունը: Մի անգամ իմաստասերներից մեկը Հերոմին այսպիսի հարց տվեց.

- Արքայ, ասում են դու եւ Զաբել թագուհին երջանիկ ամուսիններ եք, իրո՞ք դա այդպես է:

- Այո՛:

- Ո՞րն է ձեր երջանկության գաղտնիքը:

- Փոխադարձ սերը: Երբ սիրում ես անձնվիրաբար՝ աստիճանագրվում ես ինքու՛մ քեզ.՝ պատասխանեց Հերոմը:

«ԱՐԲԱՅԱՊԱՏՈՒՄ»

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ